

«Ցեպելին Արմենիա»

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային
ստանդարտներին համապատասխան՝
Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական եզրակացություն**

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն.....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	Ընդհանուր տեղեկություններ «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ի և նրա գործունեության մասին	5
2	Ընկերության գործառնական միջավայրը	5
3	Պատրաստման հիմունքները	6
4	Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ.....	7
5	Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին	7
6	Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	11
7	Հիմնական միջոցներ.....	12
8	Պաշարներ	14
9	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14
10	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15
11	Կանոնադրական կապիտալ.....	16
12	Փոխառություններ	16
13	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17
14	Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ.....	18
15	Վաճառքի ինքնարժեք	19
16	Վաճառքի և իրացման ծախսեր	19
17	Ընդհանուր և վարչական ծախսեր	19
18	Շահութահարկ	20
19	Պայմանական դեպքեր և պարտավորություններ	21
20	Ֆինանսական ռիսկերի կառավարում	22
21	Կապիտալի կառավարում	25
22	Ֆինանսական գործիքների իրական արժեքը.....	25
23	Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների.....	26
24	Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ	27
25	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	28



Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ցեպեյին Արմենիա» ՍՊԸ Բաժնետիրոջը

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Ցեպեյին Արմենիա» ՍՊԸ ֆինանսական վիճակն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Ընկերության նույն ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են էական հաշվապահական հաշվառման քաղականության տեղեկատվություն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԻ Վարքագիր») սկզբունքների: Մենք կատարել ենք Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԻ Վարքագրին համապատասխան:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:



- ձեռք ենք բերում պատկերացում առևտրի վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան առևտրական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Շնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված առևտրական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Շնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր առևտրական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված առևտրական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Շնկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք առևտրական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև առևտրի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ե. Մանուկյան
Նին Կարագիշվիլի
Տնօրեն

PricewaterhouseCoopers Armenia LLC

5 մարտի 2024թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	1,063,393	1,194,531
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ		20,878	29,826
Ոչ նյութական ակտիվներ		957	1,566
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		1,107	28,713
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		77,790	-
Հետաձգված հարկային ակտիվ	19	217,931	194,456
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		1,382,056	1,449,092
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	3,730,590	2,820,058
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	1,712,482	964,624
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար		116,377	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	601,326	397,731
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		6,160,775	4,182,413
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		7,542,831	5,631,505
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	11	1,525,190	1,525,190
Չբաշխված շահույթ		437,990	1,794,857
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		1,963,180	3,320,047
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալական պարտավորություն		16,203	23,749
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		16,203	23,749
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	12	4,205,676	1,193,873
Վարձակալական պարտավորություն		9,152	10,211
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	1,348,620	976,314
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		-	107,311
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		5,563,448	2,287,709
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		5,579,651	2,311,458
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ		7,542,831	5,631,505

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2024թ. մարտի 5-ին:

Պետար Գեորգիև
 Գլխավոր տնօրեն



Գրիգոր Սուվիսյան
 Ֆինանսական տնօրեն

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Հասույթ	14	14,127,935	16,455,139
Վաճառքի ինքնարժեք	15	(11,667,521)	(12,835,202)
Համախառն շահույթ		2,460,414	3,619,937
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստի գծով ծախս		(1,156)	(34,152)
Վաճառքի և իրացման ծախսեր	16	(897,078)	(781,571)
Ընդհանուր և վարչական ծախսեր	17	(643,279)	(492,518)
Լյլ (վնաս)/օգուտ, զուտ		(26,575)	80,886
Գործառնական շահույթ		892,326	2,392,582
Ֆինանսական եկամուտ		-	27
Տոկոսային ծախս		(317,931)	(200,776)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը		574,395	2,191,833
Շահութահարկի գծով ծախս	18	(136,405)	(396,976)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ		437,990	1,794,857
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱԴԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ		437,990	1,794,857

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2023թ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ծան.	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 1 հունվարի 2022թ.		1,525,190	1,562,693	3,087,883
Տարվա շահույթ		-	1,794,857	1,794,857
Ընդամենը 2022թ. համապարփակ ֆինանսական արդյունք		-	1,794,857	1,794,857
Հայտարարված շահաբաժիններ	11	-	(1,562,693)	(1,562,693)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.		1,525,190	1,794,857	3,320,047
Տարվա շահույթ		-	437,990	437,990
Ընդամենը 2023թ. համապարփակ ֆինանսական արդյունք		-	437,990	437,990
Հայտարարված շահաբաժիններ	11	-	(1,794,857)	(1,794,857)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.		1,525,190	437,990	1,963,180

5-28 Էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2023թ.	2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ստացված դրամական միջոցներ			
Դրամական միջոցների մուտքեր հաճախորդներից		16,067,301	19,479,155
Դրամական միջոցների մուտքեր այլ դեբիտորներից		16,527	21,662
Վճարված դրամական միջոցներ			
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		(12,581,706)	(13,510,208)
Այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ		(95,758)	(10,810)
Աշխատակիցներին և նրանց անունից վճարված դրամական միջոցներ		(1,708,536)	(1,665,853)
Շահութահարկից բացի, այլ հարկեր		(2,038,922)	(2,467,779)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ		(341,094)	1,846,167
Վճարված շահութահարկ		(383,568)	(263,969)
Վճարված տոկոսներ		(314,000)	(197,872)
Գործառնական գործունեությամբ (օգտագործված) ստացված զուտ դրամական միջոցներ		(1,038,662)	1,384,326
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(124,064)	(273,124)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		33,171	57,457
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		(90,893)	(215,667)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Փոխառու միջոցներից մուտքեր		17,539,453	16,977,246
Փոխառությունների մարում		(14,533,048)	(16,326,480)
Վճարված շահաբաժիններ, հարկերից զուտ	11	(1,705,116)	(1,484,558)
Ֆինանսական գործունեությունից ստացված(օգտագործված) զուտ դրամական միջոցներ		1,301,289	(833,792)
Փոխարժեքային տատանումների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		31,861	(50,316)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին		10	397,731
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին		10	601,326

5-29 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1 Ընդհանուր տեղեկություններ «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ի և նրա գործունեության մասին

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ-ի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն, («ՀՀՄՍ հաշվառման ստանդարտներ»), «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») համար:

Ընկերությունը հիմնադրվել է 2005թ. հունիսի 23-ին, և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է՝ հիմնադրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունը Zeppelin International AG holding-ն էր, իսկ վերջնական մայր ընկերությունը՝ Zeppelin GmbH-ն: Վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Ֆրիդրիխշաֆեն քաղաքը, Բադեն-Վուրտտեմբերգ, Գերմանիա:

Հիմնական գործունեությունը. Ընկերության հիմնական բիզնես գործունեությունը շինարարական և գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների, բեռնամբարձիչների, էքսկավատորների, բեռնատարների, գեներատորների, պահեստամասերի արտադրությունն է, և հարակից ծառայությունների մատուցումը: Ընկերության գործունեության իրականացման հիմնական վայրն է Հայաստանի Հանրապետության Աբովյան քաղաքը:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 2 Արտադրական թաղամաս, 4րդ մասնաշենք, Աբովյան, 2201, Հայաստանի Հանրապետություն:

2 Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումներ, տես Ծան. 19: Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների հոսքերը: Հետևաբար, տարածաշրջանում շարունակվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, ֆոնդային շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնությունում առկա այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ հատվածների վրա: Ներկայիս տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ընթացիկ ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքից:

COVID 19. 2020թ. մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համաճարակի՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցության զսպմանն ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ինքնամեկուսացումը, գործարար գործունեության սահմանափակումները, ընդհուպ ձեռնարկությունների փակումը: Վերոնշյալ միջոցներից մի քանիսը հետագայում մեղմվել են, սակայն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեռևս առկա է ռիսկ, որ Հայաստանի իշխանությունները լրացուցիչ սահմանափակումներ կկիրառեն 2024թ. ընթացքում, այդ թվում՝ պայմանավորված վիրուսի նոր տարբերակների ի հայտ գալով:

Պատերազմ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև. Ընդհանուր առմամբ, ակնկալվում է, որ պատերազմը համատարած ազդեցություն կունենա համաշխարհային տնտեսության վրա, օրինակ՝ ապրանքների գների աճի, նավթի/գազի/ածխի հնարավոր պակասի, գործունեության ընդհատումների և այլնի միջոցով: Այնուամենայնիվ, Ընկերությունը անմիջականորեն չի առնչվում պատերազմից տուժած տարածքներին: Ներկայիս տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ընթացիկ ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքից:

3 Պատրաստման հիմունքները

Պատրաստման հիմունքները. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԻ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՀՀՄՍ») պահանջներին համապատասխան («ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ»), սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության էական սկզբունքները ներկայացված են համապատասխան ծանոթագրություններում: Բացի 2023թ. հունվարի 1-ից գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների, սույն քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ (տես Ծանոթագրություն 5-ը և ստորև բացահայտված ներկայացման փոփոխությունները):

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման էական գնահատումներ: Բացի այդ, Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ ղեկավարությունից պահանջվում է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ որտեղ ենթադրություններն ու գնահատականները էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Արտարժույթի փոխարկում. Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ Հայաստանի Հանրապետության դրամը (ՀՀ դրամ): Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով:

Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Ընկերության ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս արտարժույթի փոխարկումից օգուտի/վնասի կազմում, և որպես այլ գործառնական եկամուտ/ծախս՝ այլ մնացորդների կազմում:

Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 404.79 ՀՀ դրամ (2022թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 393.57 ՀՀ դրամ), 1 եվրո = 447.90 ՀՀ դրամ (2022թ.՝ 1 եվրո = 420.06 ՀՀ դրամ), 1 ՌԴ ռուբլի = 4.50 դրամ (2022թ.՝ 1 ՌԴ ռուբլի = 5.59 ՀՀ դրամ):

Ներկայացման փոփոխություններ. Տարվա ընթացքում Ընկերությունը փոփոխել է այլ գործառնական եկամուտների և այլ գործառնական ծախսերի իր դասակարգումը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ընկերությունը կարծում է, որ փոփոխությունը ապահովում է ավելի հավաստի և համապատասխան տեղեկատվություն: Համաձայն ՀՀՄՍ 8-ի, փոփոխությունը կատարվել է հետընթաց, և համեմատական տեղեկատվությունը համապատասխանաբար վերադասակարգվել է: Ներկայացման նպատակով վերադասակարգումների ազդեցությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Սկզբնապես ներկայացված	Վերադասա- կարգում	Վերադասակարգված 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ գործառնական եկամուտ	106,977	(106,977)	-
Այլ գործառնական ծախսեր	(26,091)	26,091	-
Այլ (վնաս)/օգուտ, գուև	-	80,886	80,886

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Ընկերության ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այդ ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է հաշվապահական հաշվառման գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Մասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ. լրացուցիչ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 7-ում:

Պաշարների հնացում. լրացուցիչ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 8-ում:

Ակնկալվող պարտքային կորուստներ. լրացուցիչ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 9-ում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում. լրացուցիչ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 18-ում:

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. լրացուցիչ տեղեկատվությունը տե՛ս Ծանոթագրություն 24-ում:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հետևյալ նոր ստանդարտները և փոփոխությունները.

ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր» (թողարկվել է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ17-ը փոխարինում է ՖՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը: Սա ներդրողների համար դժվարեցնում էր համեմատումը և համադրումը այլ առումներով նմանատիպ ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների հետ: ՖՀՄՍ17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա):

Ապահովագրողները կարտացոլեն ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, Ընկերությունը անմիջապես ճանաչում է վնաս:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

ՖՅՄՍ 17-ի և ՖՅՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՅՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Փոփոխությունները վերաբերում են ՖՅՄՍ 17-ի ութ դրույթներին, և դրանք նախատեսված չեն ստանդարտի հիմնարար սկզբունքները փոխելու համար: ՖՅՄՍ 17-ում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- *Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.* ՖՅՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՅՄՍ 4-ով սահմանված՝ ՖՅՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- *Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.* Կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- *Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.* Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:
- *Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. վնասների վերականգնում.* Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ: Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է՝ բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ:

Այլ փոփոխություններ. Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում՝ խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիությունն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ:

Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն՝ ՖՅՄՍ 17-ի կիրառմամբ նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար: Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող շահութահարկի վճարների և մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի, ընտրված անցումային արտոնություններ և այլ աննշան փոփոխություններ::

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

ՖՀՄՍ 17-ը կիրառող ապահովագրողների համար անցումային պահանջների կիրառման ընտրության հնարավորություն. Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում (թողարկվել է 2021թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ 17-ի անցումային պահանջների փոփոխությունը ապահովագրողներին հնարավորություն է տալիս բարելավելու ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման վերաբերյալ տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Փոփոխությունը վերաբերում է միայն ապահովագրողների կողմից ՖՀՄՍ 17-ին անցմանը և չի ազդում ՖՀՄՍ 17-ի որևէ այլ պահանջի վրա: ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի անցումային պահանջները կիրառվում են տարբեր ամսաթվերով, և կհանգեցնեն դասակարգման հետևյալ միանգամյա տարբերություններին ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ ներկայացված համեմատական տեղեկատվության մեջ. հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունների և ամորտիզացված արժեքով չափվող որևէ հարակից ֆինանսական ակտիվների միջև, և եթե կազմակերպությունը որոշում է վերաներկայացնել ՖՀՄՍ 9-ի նպատակներով համեմատական տեղեկատվությունը, ապա՝ դասակարգման տարբերություններ համեմատական ժամանակաշրջանում ապաճանաչված ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը չի կիրառվում) և այլ ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը կիրառվում է) միջև: Փոփոխությունը կօգնի ապահովագրողներին խուսափել այդ ժամանակավոր հաշվապահական անհամապատասխանություններից և, հետևաբար, կբարելավի համեմատական տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Դա տեղի է ունենում ապահովագրողներին ֆինանսական ակտիվների վերաբերյալ համեմատական տեղեկատվության ներկայացման տարբերակների հնարավորություն տրամադրելու միջոցով: ՖՀՄՍ 17-ի առաջին անգամ կիրառման ժամանակ կազմակերպություններին թույլատրվում է համեմատական տեղեկատվություն ներկայացնելու նպատակով կիրառել համակցված դասակարգում այն ֆինանսական ակտիվի նկատմամբ, որի համար կազմակերպությունը չի վերաներկայացնում ՖՀՄՍ 9-ով պահանջվող համեմատական տեղեկատվությունը: Անցումային տարբերակը հասանելի կլինի գործիք առ գործիք՝ թույլ տալով կազմակերպությանը ներկայացնել համեմատական տեղեկատվությունն այնպես, ինչպես եթե ՖՀՄՍ 9-ի դասակարգման և չափման պահանջները կիրառվեին այդ ֆինանսական ակտիվի նկատմամբ, բայց չպահանջելով, որ կազմակերպությունը կիրառի ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները. և ֆինանսական ակտիվի նկատմամբ դասակարգման ծածկույթը կիրառող կազմակերպությունից կպահանջվի օգտագործել անցումային ամսաթվի դրությամբ հասանելի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվությունը՝ որոշելու, թե ինչպես է կազմակերպությունն ակնկալում դասակարգել այդ ֆինանսական ակտիվը ՖՀՄՍ 9 կիրառմամբ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն: Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխությանն օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՀՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ էականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները:

Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները հստակեցնում են հետաձգված հարկի հաշվառման եղանակները այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ապագործարկման պարտավորությունները: Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում Շահութահարկ. Միջազգային հարկային բարեփոխում – Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոններ (իրապարակված է 2023թ. մայիսի 23-ին): 2023թ. մայիսին ՀՀՄՍ-ն իրապարակել է «Շահութահարկ» ՀՀՄՍ 12-ի նեղ շրջանակի փոփոխությունները: Այս փոփոխությունները կատարվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից միջազգային հարկային բարեփոխումների արդյունքում իրապարակված Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների առաջիկայում սպասվող ներդրմանը նախապատրաստվելու համար: Փոփոխությունները ժամանակավոր բացառություն են սահմանում Երկրորդ բաղադրիչի մոդելային կանոնների կիրառումն ապահովելու համար ընդունված կամ ըստ էության ընդունված հարկային օրենքներից բխող հետաձգված հարկերի ճանաչման և բացահայտման պահանջի գծով: Համաձայն ՀՀՄՍ-ի կողմից սահմանված՝ ուժի մեջ մտնելու ամսաթվի, ընկերությունները կարող են բացառությունը կիրառել անմիջապես, սակայն բացահայտման պահանջները կկիրառվեն 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2024թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Վարձակալություն. Վարձակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարձակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, նույնիսկ եթե պարտավորության էությունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: 2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՖՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ. Մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին): Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍԻ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՖՀՄՍ 7-ում՝ պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա: Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա: Բացահայտման նոր պահանջները կգործեն 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՖՅՄՍ 14 «Կարգավորող հետաձգված հաշիվներ» (թողարկվել է 2014թ. հունվարի 30-ին և ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները առաջին անգամ կիրառող կազմակերպություններին ՖՅՄՍ 14-ը հնարավորություն է ընձեռում շարունակել դրույքաչափերի կարգավորման հետ կապված գումարների ճանաչումը իրենց նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, ՖՅՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն արդեն կիրառող և այդ գումարները չճանաչող կազմակերպությունների հետ համադրելիությունը մեծացնելու նպատակով, ստանդարտը պահանջում է դրույքաչափերի կարգավորման ազդեցությունը ներկայացնել այլ հոդվածներից առանձին: Այն կազմակերպությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները արդեն ներկայացնում է ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, իրավասու չէ կիրառել ստանդարտը:

«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՖՅՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՅՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է: Հիմնական միջոցների միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով

Շենքեր	10-40
Հիմնական միջոցներ	2-25
Տրանսպորտային միջոցներ	2-6
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	Օգտակար ծառայության ժամկետի և հիմքում ընկած ակտիվի վարձակալության ժամկետի նվազագույնը

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կստացվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Ղեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները Ընկերության համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

Եթե ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները դեկավարության կողմից գնահատված ժամկետներից տարբերվեին 10%-ով, մաշվածության գծով ծախսը կաճեր/կնվազեր 26,192 հազ. ՀՀ դրամով 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (2022թ. կաճեր/կնվազեր 28,021 հազ. ՀՀ դրամով):

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ

Ցինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2023թ.

7 Հիմնական միջոցներ (շարունակություն)

Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր են համարվում վարձակալված ակտիվների բարելավման համար կատարված կապիտալ ծախսերը: Դրանց մաշվածությունը հաշվարկվում է հետևյալ մեծություններից նվազագույնով՝ օգտակար ծառայության ժամկետ կամ վարձակալության ժամկետ:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

	Հոդ և շենքեր	Հիմնա- կան միջոցներ	Տրանս- պորտա- յին միջոցներ	Վարձա- կալված գույքի բարելա- վումներ	Վարձա- կալության համար պահվող ակտիվ- ներ	Անավարտ շինարա- րություն	Ընդա- մենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>							
Սկզբնական արժեք	667,236	1,812,208	991,478	9,288	174,769	105,578	3,760,557
Կուտակված մաշվածություն	(208,119)	(1,445,069)	(559,448)	(9,288)	(4,210)	-	(2,226,134)
Կուտակված արժեզրկում	-	-	-	-	-	(52,894)	(52,894)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2022թ.	435,176	394,553	300,841	35,038	27,845	55,443	1,248,896
Ավելացումներ	15,219	23,166	228,160	-	-	-	266,545
Օտարումներ	-	(1,948)	(8,203)	-	(25,401)	(5,145)	(40,697)
Մաշվածության գծով ծախս	(25,133)	(125,472)	(128,892)	-	(716)	-	(280,213)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2022թ.	425,262	290,299	391,906	35,038	1,728	50,298	1,194,531
Սկզբնական արժեք	680,580	1,937,106	1,144,620	41,567	10,200	103,192	3,917,265
Կուտակված մաշվածություն	(255,318)	(1,646,807)	(752,714)	(6,529)	(8,472)	-	(2,669,840)
Կուտակված արժեզրկում	-	-	-	-	-	(52,894)	(52,894)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2023թ.	425,262	290,299	391,906	35,038	1,728	50,298	1,194,531
Ավելացումներ	-	71,305	42,014	2,559	-	16,810	132,688
Օտարումներ	-	(873)	(1,032)	-	-	-	(1,905)
Մաշվածության գծով ծախս	(24,746)	(100,722)	(129,294)	(6,575)	(584)	-	(261,921)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	400,516	260,009	303,594	31,022	1,144	67,108	1,063,393
Սկզբնական արժեք	680,580	2,007,538	1,185,602	44,126	10,200	120,002	4,048,048
Կուտակված մաշվածություն	(280,064)	(1,747,529)	(882,008)	(13,104)	(9,056)	-	(2,931,761)
Կուտակված արժեզրկում	-	-	-	-	-	(52,894)	(52,894)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	400,516	260,009	303,594	31,022	1,144	67,108	1,063,393

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 261,921 հազ. ՀՀ դրամ ընդհանուր մաշվածության գծով ծախսից (2022 թ.՝ 280,213 հազ. ՀՀ դրամ) 127,114 հազ. ՀՀ դրամ վերագրվում է վաճառքի ինքնարժեքին (2022 թ.՝ 154,232 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 15, 80,095 ՀՀ դրամ վերագրվում է վաճառքի և իրացման ծախսերին (2022թ.՝ 74,208 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 16, և 54,712 հազ. ՀՀ դրամ՝ ընդհանուր և վարչական ծախսերին (2022թ.՝ 51,773 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 17:

8 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Ապրանքներ վերավաճառքի համար	2,115,212	919,023
Պահեստամասեր	1,605,103	1,887,125
Նյութեր	10,275	13,910
Ընդամենը պաշարներ	3,730,590	2,820,058

Պաշարները ներկայացված են արժեզրկման պահուստից զուտ: Պահեստամասերի գծով արժեզրկման պահուստը կազմում է 400,579 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 319,720 հազ. ՀՀ դրամ), իսկ վերավաճառքի համար նախատեսված ապրանքների գծով՝ 153,014 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 141,384 հազ. ՀՀ դրամ):

Վաճառքի ինքնարժեքը ներկայացնող ժամանակաշրջանում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմել է 10,558,255 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 11,463,799 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 15:

Պաշարների հնացում. Կախված պաշարների հնությունից և կատեգորիայից Ընկերությունը ճանաչում է պահուստ դանդաղ իրացվելի պաշարների համար՝ պաշարների արժեքի 10%-ից մինչև 100%-ի սահմաններում:

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը հաշվառվում են ամրոտիզացված արժեքով: Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման գծով պահուստը:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,601,054	946,694
Պարտքային կորուստի գծով պահուստ	(63,781)	(62,625)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	1,537,273	884,069
Կանխավճարներ ՀՀ մաքսային ծառայությանը	135,194	39,367
Կանխավճարներ մատակարարներին	1,103	912
Այլ դեբիտորական պարտքեր	38,912	40,276
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,712,482	964,624

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 161,613 հազ. ՀՀ դրամի առևտրային դեբիտորական պարտքը (2022թ. դեկտեմբերի 31՝ 125,168 հազ. ՀՀ դրամ) արտահայտված է ԱՄՆ դոլարով, եվրոյով արտահայտված առևտրային դեբիտորական պարտք առկա չէ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13 հազ. ՀՀ դրամ):

Ակնկալվող պարտքային կորուստներ. Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ ակնկալվող պարտքային կորուստների չափման համար, որը նախատեսում է բոլոր առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի գծով դրանց տևողության ողջ ժամկետի համար պահուստի ձևավորում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակով առևտրային կրեդիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով ռիսկի ընդհանուր բնութագրերից և ժամկետանց օրերի թվից:

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Առևտրային դեբիտորական պարտքերի համար պարտքային կորստի պահուստը որոշվում է ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի ժամկետայնության հաշվարկի միջոցով: Պահուստի ժամկետայնության հաշվարկը հիմնված է ակտիվի ժամկետանց օրերի քանակի վրա՝ ճշգրտված ՀՆԱ-ի աճով և գործազրկության մակարդակի փոփոխությամբ:

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ Հազ. ՀՀ դրամ	2023թ.				2022թ.			
	Վնասի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ողջ ժամկետի համար	Չուտ հաշվեկշռային արժեք	Վնասի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ողջ ժամկետի համար	Չուտ հաշվեկշռային արժեք
Առևտրային դեբիտորական պարտքեր								
- ընթացիկ	2%	1,408,917	26,607	1,382,310	2%	664,084	(5,434)	658,650
- մինչև 30 օր ժամկետանց	2%	65,086	1,302	63,784	2%	193,795	(7,769)	186,026
- 31-ից 120 օր ժամկետանց	2%	73,537	1,471	72,066	2%	24,457	(4,103)	20,354
- 121-ից 210 օր ժամկետանց	50%	36,124	18,062	18,062	50%	13,190	(8,826)	4,364
- 211-360 օր ժամկետանց	75%	4,205	3,154	1,051	75%	41,603	(26,928)	14,675
- ավելի քան 360 օր ժամկետանց	100%	13,185	13,185	-	100%	9,565	(9,565)	-
- անհատական պահուստ	100%	-	-	-	100%	-	-	-
Ընդամենը		1,601,054	(63,781)	1,537,273		946,694	(62,625)	884,069

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի շարժը ըստ ակնկալվող պարտքային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար:

Հազ. ՀՀ դրամ	2023թ.	2022թ.
Պարտքային կորստի պահուստ առ 1 հունվարի	62,625	28,474
Նոր առաջացած	19,487	91,099
Վերականգնում տարվա ընթացքում	(18,331)	(56,948)
Պարտքային կորստի պահուստ առ 31 դեկտեմբերի	63,781	62,625

10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Հաճախորդներից դրամական միջոցների մուտքերը մատակարարներին վճարված դրամական միջոցները հաշվառվում են՝ համապատասխան ավելացված արժեքի հարկը ներառյալ:

10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Ցպահանջ բանկային մնացորդներ	601,326	397,731
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	601,326	397,731

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների որակը՝ ելնելով վարկային ռիսկի դասերից՝ 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
S&P Գլոբալ վարկանիշ B	601,326	397,731

11 Կանոնադրական կապիտալ

Սեփականատերերի կողմից վճարված բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո:

2023թ. դեկտեմբերի 31-ին Ընկերության բաժնեմասերի ընդհանուր թիվը կազմել է 3,050,380 բաժնեմաս (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 3,050,380 բաժնեմաս)՝ մեկ բաժնեմասի համար 500 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ մեկ բաժնեմասի համար՝ 500 ՀՀ դրամ) անվանական արժեքով: Բոլոր բաժնետոմսերն ամբողջությամբ վճարված են: Յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է մեկ ձայնի իրավունք: Տարվա ընթացքում հայտարարված և վճարված շահաբաժինները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Վճարման ենթակա շահաբաժիններ առ 1 հունվարի		-
Տարվա ընթացքում հայտարարված շահաբաժիններ	1,794,857	1,562,693
Տարվա ընթացքում վճարված շահաբաժիններ	(1,794,857)	(1,562,693)
Վճարման ենթակա շահաբաժիններ առ 31 դեկտեմբերի	-	-
Տարվա ընթացքում մեկ բաժնեմասի դիմաց հայտարարված շահաբաժիններ	0.588	0.512

Բոլոր շահաբաժինները հայտարարվել և վճարվել են ՀՀ դրամով: Հայտարարված շահաբաժինների գումարը ներառում է 89,743 հազ. ՀՀ դրամի չափով յուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտի շահութահարկը (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 78,135 հազ. ՀՀ դրամ):

12 Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց կատարված գործարքի ծախսումների, և հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընկերության կողմից պահվում է երկու բանկային օվերդրաֆտ: Դրանցից մեկի գծով բանկային օվերդրաֆտի սահմանաչափն է՝ 7,050,000 հազ. ՀՀ դրամ: Այն արտահայտված է հայկական դրամով: Տոկոսադրույքը կազմում է տարեկան 11% Մյուս օվերդրաֆտի սահմանաչափը 400,000 հազ. ՀՀ դրամ է: Այն արտահայտված է ՀՀ դրամով, 13% տոկոսադրույքով: Փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

12 Փոխառություններ (շարունակություն)

Չուտ պարտավորությունների համադրում

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է զուտ պարտավորությունների վերլուծությունը և Ընկերության ֆինանսավորման գործունեության արդյունքում պարտավորությունների շարժը: Այս պարտավորությունների հոդվածները համապատասխանում են դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում որպես ֆինանսավորում ներկայացված պարտավորություններին:

	31 դեկտեմբերի 2023թ. ավարտված տարի			31 դեկտեմբերի 2022թ. ավարտված տարի		
	Վարկեր և փոխառու- թյուններ	Վարձակա- լության գծով պարտավո- րություններ	Ընդամենը	Վարկեր և փոխառու- թյուններ	Վարձակա- լության գծով պարտավո- րություններ	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
Պարտավորություններ ֆինանսական գործունեությունից առ 1 հունվարի	1,193,873	33,960	1,227,833	542,162	31,920	574,082
Դրամական միջոցների հոսքեր						
Չուտ ներհոսքեր (մարումներ) – դրամական միջոցների հոսքեր	3,006,405	(11,282)	2,995,123	650,766	5,551	656,317
Տոկոսային վճարներ	(312,941)	(1,059)	(314,000)	(197,872)	(3,511)	(201,383)
Ոչ դրամական փոփոխություններ						
Տոկոսային ծախս Ավելացումներ	318,339	3,736	322,075	198,817	-	198,817
				-	-	-
Պարտավորություններ ֆինանսական գործունեությունից առ 31 դեկտեմբերի	4,205,676	25,355	4,231,031	1,193,873	33,960	1,227,833

13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	358,316	141,211
Այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր	83,340	54,267
Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտքեր առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	441,656	195,478
Վճարման ենթակա հարկեր	402,346	264,557
Աշխատակիցների հատուցումների գծով հաշվեգրված ծախսեր	173,770	182,986
Ստացված կանխավճարներ	169,850	223,741
Կուտակված և չօգտագործված արձակուրդ	69,076	45,491
Այլ կրեդիտորական պարտքեր	91,922	64,061
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,348,620	976,314

13 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (շարունակություն)

2023թ. դեկտեմբերի 31-ի 133,357 հազ. ՀՀ դրամ գումարով առևտրային կրեդիտորական պարտքերը արտահայտված են ԱՄՆ դոլարով (31 դեկտեմբերի 2022 թ.՝ 144,802 հազ. ՀՀ դրամ), 69,202 հազ. ՀՀ դրամ՝ եվրոյով (31 դեկտեմբերի 2022թ. 14,758 հազ. ՀՀ դրամ), 5,158 հազ. ՀՀ դրամ՝ ՌԴ ռուբլով (31 դեկտեմբերի 2022թ.՝ զրո):

14 Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ

Հասույթը ճանաչվում է գեղչերից, վերադարձներից և ավելացված արժեքի հարկերից, արտահանման տուրքերից, ակցիզային հարկից և նմանատիպ այլ պարտադիր վճարներից զուտ: Ընդհանուր առմամբ, Ցեպելին Արմենիա ՍՊԸ-ն վերականգնում է դեբիտորական պարտքերը հաշիվ-ապրանքագրի ներկայացումից հետո 60 օրվա ընթացքում՝ կախված հաճախորդից:

Ապրանքների վաճառքից հասույթ. Ապրանքների վաճառքից ստացված հասույթը հիմնականում ներառում է սարքավորումների ուղղակի վաճառք. (i) էքսկավատորներ. (ii) բեռնիչներ. (iii) ինքնաթափ բեռնատարներ. (iv) բուլդոզերներ. (v) ճանապարհային գլանամեքենաներ և այլն և պահեստամասերի ուղղակի վաճառք: Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է որոշակի ժամանակային կետում:

Մատուցված ծառայություններից հասույթ. Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ներառում է վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցումը, նախնական ախտորոշիչ ստուգման ծառայությունները, ամսական ստուգման ծառայությունները, Հայաստանում մայր ընկերության արտադրանքի վաճառքի գծով միջնորդավճարը, երկարաձգված երաշխիքային ծառայություններ: Մատուցված ծառայությունից հասույթը ճանաչվում է ամփոփաթերթերի հիման վրա, որոնք մանրամասն ներկայացնում են կատարված փաստացի աշխատանքը: Երաշխիքին հատկացված եկամուտը ճանաչվում է գծային մեթոդի հիմունքով՝ երաշխիքային ժամանակահատվածում:

Եթե Ընկերությունը որևէ լրացուցիչ ծառայություն է մատուցում հաճախորդին ապրանքների նկատմամբ վերահսկողության փոխանցումից հետո, ապա այդպիսի ծառայություններից ստացված հասույթը համարվում է առանձին կատարողական պարտավորություն և ճանաչվում է ծառայության մատուցման ընթացքում: Ստանդարտ երաշխիքային պայմաններով անսարք ապրանքները վերանորոգելու կամ փոխարինելու գծով Ընկերության պարտավորությունը ճանաչվում է որպես պահուստ:

Ընկերությունը հաճախորդներից դրամական մուտքերը և մատակարարներին վճարումները դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացնում է ԱԱՀ-ն ներառյալ:

Հասույթը ամբողջությամբ ստացվում է հաճախորդների հետ պայմանագրերից և բաշխվում է հետևյալ կերպ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Ապրանքների վաճառք՝ կոնկրետ ամսաթվով	12,328,358	14,439,938
Մատուցված ծառայություններ՝ ժամանակի ընթացքում	1,799,577	2,015,201
Ընդամենը հասույթ	14,127,935	16,455,139

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ն հասույթ է ստանում ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից հետևյալ աշխարհագրական տարածքներում.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Տեղական վաճառք	11,902,538	13,255,626
Արտահանում	425,820	1,184,312
Ընդամենը ապրանքների վաճառքից հասույթ	12,328,358	14,439,938
Տեղական վաճառք	1,383,771	1,644,693
Արտահանում	415,806	370,508
Ընդամենը մատուցված ծառայություններից հասույթ	1,799,577	2,015,201
Ընդամենը հասույթ	14,127,935	16,455,139

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2023թ.

15 Վաճառքի ինքնարժեք

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ծան.	2023թ.	2022թ.
Վաճառված ապրանքների արժեքը	8	10,558,255	11,463,799
Անձնակազմի գծով ծախսեր		758,685	927,524
Հիմնական միջոցների մաշվածություն	7	127,114	154,232
Սպառված պահեստամասեր		60,977	79,359
Այլ		162,490	210,288
Ընդամենը վաճառքի ինքնարժեք		11,667,521	12,835,202

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են 37,536 հազ. ՀՀ դրամ պարտադիր կենսաթոշակային ֆոնդի հատկացումներ (2022թ.՝ 41,641 հազ. ՀՀ դրամ):

16 Վաճառքի և իրացման ծախսեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ծան.	2023թ.	2022թ.
Անձնակազմի գծով ծախսեր		604,549	503,376
Հիմնական միջոցների մաշվածություն	7	80,095	74,208
Գովազդային և մարքեթինգի ծառայություններ		46,550	33,298
Տրանսպորտային ծախսեր		26,046	40,436
Վառելիքի գծով ծախսեր		16,763	19,676
Հիմնական միջոցների գործառնական վարձակալության գծով ծախս		16,757	19,809
Վերանորոգման և սպասարկման ծառայություններ		16,553	11,388
Ճանապարհորդության ծախսեր		15,971	5,591
Ապահովագրական ծախսեր		12,764	14,766
Այլ		61,030	59,023
Ընդամենը վաճառքի և իրացման ծախսեր		897,078	781,571

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամների հատկացումները՝ 29,910 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 22,599 հազ. ՀՀ դրամ):

17 Ընդհանուր և վարչական ծախսեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ծան.	2023թ.	2022թ.
Անձնակազմի գծով ծախսեր		329,213	212,055
Բանկային վճարներ		125,094	67,354
Հիմնական միջոցների մաշվածություն	7	54,712	51,773
Կոմունալ ծախսեր		27,037	32,726
Վերանորոգման և սպասարկման ծախսեր		19,490	20,381
Խորհրդատական և այլ մասնագիտական ծառայություններ		18,897	30,427
Ճանապարհորդության ծախսեր		12,954	6,170
Վառելիքի գծով ծախսեր		8,577	7,404
Այլ		47,305	64,228
Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր		643,279	492,518

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամների հատկացումները՝ 16,288 հազ. ՀՀ դրամ (2022թ.՝ 9,520 հազ. ՀՀ դր.):

18 Շահութահարկ

Ֆինանսական հաշվետվություններում շահութահարկը ներկայացվում համաձայն օրենսդրության, որն, ըստ եռթյան, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Անորոշ հարկային դիրքեր. Ընկերության անորոշ հարկային դիրքերը վերազնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվի են առնվում այն դեպքում, երբ ղեկավարությունը գտնում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը ավելի մեծ է, քան դրանց բացակայությունը, եթե հմբի հարկային գործունեությունը վիճարկի հարկային մարմինների կողմից: Գնահատումը հիմնված է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ եռթյան, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի շուրջ ցանկացած հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տոկոսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը:

Հետաձգված հարկային ակտիվի ճանաչում. Ճանաչված հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են շահութահարկի այն գումարը, որը կարող է հաշվանցվել ապագա հարկվող շահույթից նվազեցումների դիմաց և ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա համապատասխան հարկային արտոնության իրացման բարձր հավանականություն: Սա ենթադրում է ժամանակավոր տարբերությունների առկայություն, որոնք ապագայում ակնկալվում է վերականգնել, և բավարար ապագա հարկվող շահույթ, որոնց դիմաց ակնկալվում է օգտագործել նվազեցումները: Ապագա հավանական հարկվող շահույթի և հարկային արտոնությունների գումարը հիմնված են ղեկավարության ակնկալիքների վրա, որոնք համարվել են ողջամիտ տվյալ հանգամանքներում:

Հարկային օրենսդրություն. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա է տարբեր մեկնաբանությունների, տես Ծանոթագրություն 19:

(ա) Շահութահարկի գծով ծախսի կազմը

Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկի գծով ծախսը ներառում է հետևյալ բաղադրիչները.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Ընթացիկ հարկ	159,880	373,588
Հետաձգված հարկ	(23,475)	23,388
Տարվա շահութահարկի գծով ծախս	136,405	396,976

(բ) շահութահարկի գծով ծախսի համադրում շահույթի կամ վնասի հետ՝ բազմապատկած կիրառելի հարկադրույքով

Ընկերության 2023թ. հարկվող շահույթի գծով կիրառելի շահութահարկի դրույքաչափը 18% է (2022թ.՝ 18%): Հարկերի գծով ծախսի ակնկալվող և իրական մեծությունների միջև համեմատագրումը ներկայացված է ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2023թ.	2022թ.
Շահույթ մինչև հարկումը	574,395	2,191,835
Տեսական հարկային վճար՝ օրենքով սահմանված 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%).	(103,391)	(394,530)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Չհարկվող եկամուտ	52,230	57,150
- Չնվազեցվող ծախսեր	(69,878)	(59,596)
Նախորդ տարիների ընթացքում ընթացիկ հարկի գծով պակաս հաշվարկված պահուստ	(15,366)	-
Տարվա շահութահարկի գծով ծախս	(136,405)	(396,976)

18 Շահութահարկ (շարունակություն)

(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

ՖՀՄՍ-ի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև:

Այդ ժամանակավոր տարբերություններում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև.

	1 հունվարի 2023թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2023թ.
<i>Հազ. ՀՀ դրամ</i>			
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	42,025	8,036	50,061
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(5,269)	1,511	(3,758)
Պաշարներ	82,998	16,649	99,647
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,272	209	11,481
Վարձակալական պարտավորություն	6,113	(1,549)	4,564
Առևտրային և այլ կրեդիտորական պարտք	57,317	(1,381)	55,936
Չուտ հետաձգված հարկային ակտիվ	194,456	23,475	217,931

Այդ ժամանակավոր տարբերություններում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև.

	1 հունվարի 2022թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Հազ. ՀՀ դրամ</i>			
Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Հիմնական միջոցներ	52,009	(9,984)	42,025
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(6,979)	1,710	(5,269)
Պաշարներ	105,646	(22,648)	82,998
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	5,125	6,147	11,272
Վարձակալական պարտավորություն	5,746	367	6,113
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	56,298	1,020	57,317
Չուտ հետաձգված հարկային ակտիվ	217,844	(23,388)	194,456

19 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Իր գնահատականների, ինչպես նաև արտաքին մասնագիտական խորհրդատվության հիման վրա դեկավարությունը կարծում է, որ պահանջների գծով չի կարող կրել որևէ էական վնաս, որը կգերազանցի սույն ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները:

Հարկային օրենսդրություն. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա է տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների, որոնք կարող են ունենալ հաճախակի բնույթ: Ղեկավարության կողմից այդ օրենսդրության մեկնաբանումը՝ Ընկերության գործարքների և գործունեության հանդեպ կիրառման առումով կարող է վիճարկվել համապատասխան մարմինների կողմից: Հարկային մարմիններն օրենսդրության մեկնաբանման և հարկային ստուգումների ընթացքում կարող են կիրառել առավել խիստ և բարդ մոտեցում:

19 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

Բյուջեի կատարման ուղղված հարկային մուտքերի ավելացման ջանքերի հետ համատեղ, վերոնշյալը կարող է հանգեցնել հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հաճախականության ու խորության աճի: Մասնավորապես, հնարավոր է, որ անցյալում ինդրահարույց չհամարված գործարքներն ու գործունեությունը վիճարկվեն: Որպես հետևանք, կարող են առաջադրվել էական ծավալի լրացուցիչ հարկեր, տուգանքներ և տոկոսներ: Հարկային ստուգումները կարող են ներառել ստուգման ամսաթվին անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիները: Որոշակի հանգամանքների դեպքում ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակահատվածներ:

ՀՀ տրանսֆերային գնագոյացման (ՏԳ) օրենսդրությունը ընդհանուր առմամբ համահունչ է Տևտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից մշակված ՏՏ միջազգային սկզբունքներին, թեև այն ունի որոշակի առանձնահատկություններ: ՏԳ-ի օրենսդրությունը նախատեսում է վերահսկվող գործարքների (կապակցված կողմերի միջև գործարքներ և չկապակցված կողմերի միջև որոշակի գործարքներ) լրացուցիչ հարկային ուսումնասիրության հնարավորություն, եթե այդպիսի գործարքները չեն իրականացվում պարզած ձեռքի սկզբունքով: Դեկավարությունն իրականացրել է ներքին հսկողության գործառույթներ՝ ՏԳ գործող օրենսդրությանը համապատասխանությունն ապահովելու տեսանկյունից:

Վերահսկվող գործարքներից առաջացող հարկային պարտավորությունները որոշվում են դրանց փաստացի գործարքների գների հիման վրա: Հնարավոր է, որ ՏԳ կանոնների մեկնաբանության զարգացումների ի հետ մեկտեղ, նման գները ենթակա լինեն վիճարկման: Կյոպիսի մարտահրավերների ազդեցությունը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել. այնուամենայնիվ, դա կարող է էական նշանակություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի և/կամ գործունեության համար:

Կապիտալ ծախսերի գծով պարտավորություններ. 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պայմանագրային կապիտալ ծախսերի գծով պարտավորություններ:

20 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման առաջնային գործառույթն է ռիսկերի սահմանաչափի սահմանումը, և այնուհետև ցանկացած տեսակի ռիսկերի ազդեցության պահպանումը այդ սահմանաչափում: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Պարտքային ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, այսինքն՝ ռիսկը, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով:

Պարտքային ռիսկի ենթարկվածությունը առաջանում է առևտրային դեբիտորական պարտքերից, պայմանագրային ակտիվներից, դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես նաև Ընկերության փոխառությունների և այլ գործարքների արդյունքում, որոնք առաջ են բերում ֆինանսական ակտիվներ և հետհաշվեկշռային վարկային պարտավորություններ:

Ընկերության առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկի արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում:

Պարտքային ռիսկի կառավարում. Պարտքային ռիսկը Ընկերության գործունեության համար հանդիսանում է ամենամեծ ռիսկը, ուստի դեկավարությունն ուշադիր վերահսկում է իր վարկային ռիսկի ենթարկվածությունը:

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ է և ենթադրում է մոդելների կիրառում, քանի որ ռիսկը փոփոխվում է՝ կախված շուկայական պայմաններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակի ընթացքից: Ակտիվների պորտֆելի գծով պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է դեֆոլտի առաջացման հավանականության գնահատում, կորուստների համապատասխան գործակիցների և գործընկերների միջև դեֆոլտի հարաբերակցության հետագա գնահատում:

20 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Սահմանաչափեր. Ընկերությունը կառավարում է իր պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափեր կիրառելով մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար: Պարտքային ռիսկի սահմանափակումները պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման:

Ընկերության ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Դետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում տրամադրել պարտքային ռիսկի ժամկետայնության վերաբերյալ և այլ տեղեկատվություն, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 9-ում:

Անկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափում. ԱՊԿ-ն իրենից ներկայացնում է դրամական միջոցների ապագա դեֆիցիտի ներկա արժեքի հավանականությամբ կշռված գնահատական (այսինքն՝ միջին կշռված պարտքային կարուստը, տրված ժամանակահատվածում տեղի ունեցող դեֆոլտի համապատասխան ռիսկերով, որոնք օգտագործվել են որպես կշիռ): ԱՊԿ չափումն անկողմնակալ է և որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը գնահատելու միջոցով: ԱՊԿ չափումն իրականացվում է Ընկերության կողմից օգտագործվող հետևյալ չորս բաղադրիչների հիման վրա. դեֆոլտի հավանականություն, դեֆոլտի ռիսկին ենթակա պարտքային պահանջի մեծություն, դեֆոլտից առաջացող վնաս և զեղչման տոկոսադրույք:

Պարտքային ռիսկի կենտրոնացում. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի կենտրոնացման: 2023թ. դեկտեմբերի 31-ին Ընկերությունն ուներ հինգ գործընկեր (2022 թ.՝ մեկ գործընկեր), որոնց գծով դեբիտորական պարտքի ընդհանուր մնացորդները գերազանցել են 100,000 հազ. ԶԶ դրամը: Մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 1,291,444 հազ. ԶԶ դրամ (2022թ.՝ 499,668 հազ. ԶԶ դրամ) կամ առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի համախառն գումարի 77%-ը (2022թ.՝ 57%):

Շուկայական ռիսկ. Ընկերությունը ենթակա է շուկայական ռիսկերի ազդեցության: Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արտարժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների և (գ) բաժնային արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Դեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերից դուրս վնասների առաջացումն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր: Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործոնի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործոնները: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործոններում փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույքի և արտարժույթի դրույքաչափի փոփոխությունները:

Արժույթային ռիսկ. Արտարժույթային ռիսկի առնչությամբ ղեկավարությունը սահմանում է ռիսկի ազդեցության մակարդակի սահմանափակումներ՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական: Ստորև բերված աղյուսակը ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերության՝ արտարժույթի փոխարժեքի ռիսկի ենթարկվածությունը:

Հազ. ԶԶ դրամ	Առ 31 դեկտեմբերի 2023թ.			31 դեկտեմբերի 2022թ.		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտություններ	Չուտ հաշվեկշռային դիրք	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտություններ	Չուտ հաշվեկշռային դիրք
ԱՄՆ դոլար	729,842	(133,357)	596,485	521,796	(144,802)	376,994
Եվրո	-	(69,202)	(69,202)	13	(14,758)	(14,745)
ՌԴ ռուբլի	-	(5,158)	(5,158)	180	-	180
Ընդամենը	729,842	(207,717)	522,125	521,989	(159,560)	362,429

Վերը ներկայացված վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները:

20 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի կամ վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2022թ.
<i>Ազդեցություն շահույթի կամ վնասի վրա</i>		
ԱՄՆ դոլարի արժևորում 20%-ով (2022թ.՝ արժևորում 25%-ով)	119,297	94,249
ԱՄՆ դոլարի անկում 20%-ով (2022 թ.՝ անկում 25%-ով)	(119,297)	(94,249)
Եվրոյի արժևորում 20%-ով (2022թ.՝ արժևորում 25%-ով)	13,840	3,686
Եվրոյի անկում 20%-ով (2022 թ.՝ անկում 25%-ով)	(13,840)	(3,686)
ՌԴ ռուբլու արժևորում 20%-ով (2022թ.՝ արժևորում 5%-ով)	1,032	9
ՌԴ ռուբլու անկում 20%-ով (2022 թ.՝ անկում 5%-ով)	(1,032)	(9)

Ընկերությունը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույքների ռիսկերի կառավարման համար, քանի որ ղեկավարությունն այդ ռիսկը համարում է աննշան Ընկերության բիզնեսի համար: Ընկերությունը վերահսկում է տոկոսադրույքները իր ֆինանսական գործիքների գծով: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են արդյունավետ տոկոսադրույքները 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմնվելով առանցքային ղեկավար անձնակազմի կողմից ուսումնասիրված հաշվետվությունների վրա:

<i>Տարեկան % արտահայտությամբ</i>	2023թ.	2022թ.
Պարտավորություններ		
ՀՀ դրամով արտահայտված փոխառություններ	11-13	10.75-12.5

Այլ գնային ռիսկ. Ընկերությունը չի ենթարկվում սեփական կապիտալի գծով գնային ռիսկի:

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ կազմակերպությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակ: Ընկերությունը օրական կտրվածքով առնչվում է դրամական միջոցների պահանջների: Իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության ղեկավարության կողմից: Ղեկավարությունը վերահսկում է Ընկերության դրամական հոսքերի ամսական շարժի կանխատեսումները:

Ընկերությունը աշխատում է պահպանել կայուն ֆինանսավորման աղբյուրներ, որոնք հիմնականում բաղկացած են փոխառություններից, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերից: Ընկերությունը ֆինանսական միջոցների ներդրումներ է կատարում իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացված փաթեթում, որպեսզի կարողանա արագորեն և անմիջականորեն բավարարել չնախատեսված իրացվելիության պահանջները: Ընկերության իրացվելիության պորտֆելը բաղկացած է դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, տե՛ս ծանոթագրություն 10 Ըստ ղեկավարության գնահատման՝ իրացվելիության փաթեթի դրամական միջոցները և բանկային ավանդները կարող են մեկ օրվա ընթացքում վերածվել կանխիկի՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջը բավարարելու համար:

Ղեկավարությունը վերահսկում է իրացվելիության դիրքը և պարբերաբար իրականացնում է իրացվելիության սթրես-թեստ՝ օգտագործելով ինչպես բնականոն, այնպես էլ առավել խիստ շուկայական պայմաններ ներառող սցենարներ:

Ստորև ներկայացված է պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ. ժամկետայնության աղյուսակում բացահայտված գումարներն իրենցից ներկայացնում են պայմանագրային չգեղջված դրամական միջոցների հոսքեր, ներառյալ համախառն վարձակալական պարտավորությունները, համախառն վարկային պարտավորությունները և տոկոսների վճարումները: Այն դեպքերում, երբ վճարվող գումարը ֆիքսված չէ, աղյուսակում նշված արժեքը որոշվում է՝ ելնելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմաններից: Արտարժույթով վճարները փոխարկվում են՝ օգտագործելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սփոթ փոխարժեքը:

20 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Մինչև 3 ամիս	3-ից 12 ամիս	12 ամիս - 5 տարի	Ընդամենը
Պարտավորություններ				
Փոխառություններ (Ծանոթագրություն 12)	7,794	4,197,882	-	4,205,676
Վարձակալության գծով պարտավորություններ	-	9,152	16,203	25,355
Առևտրային կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 13)	358,316	-	-	358,316
Այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 13)	83,340	-	-	83,340
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ	449,450	4,207,034	16,203	4,672,687

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Մինչև 3 ամիս	3-ից 12 ամիս	12 ամիս - 5 տարի	Ընդամենը
Պարտավորություններ				
Փոխառություններ (Ծանոթագրություն 12)	-	1,285,109	-	1,285,109
Վարձակալության գծով պարտավորություններ	-	10,211	23,749	33,960
Առևտրային կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 13)	141,211	-	-	141,211
Այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 13)	54,267	-	-	54,267
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ	195,478	1,295,320	23,749	1,514,547

21 Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման առումով Ընկերության խնդիրն է՝ ապահովել Ընկերության անընդհատության հիմունքով գործելու կարողությունը, միևնույն ժամանակ բաժնետերերի համար ապահովել եկամտաբերության ընդունելի մակարդակ, հաշվի առնելով այլ գործընկերների շահերը և պահպանելով կապիտալի գծով ծախսերը նվազագույնի հասցնելու համար օպտիմալ կապիտալի կառուցվածք: Կապիտալ կառուցվածքը պահպանելու և կարգավորելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու նպատակով: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից տնօրինվող կապիտալի չափը կազմել է 1,963,180 հազ. ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,320,047 հազ. ՀՀ դրամ):

22 Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Իրական արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել պատրաստակամ կողմերի միջև ընթացիկ գործարքում, բացառությամբ հարկադիր վաճառքի կամ լուծարման, և որի լավագույնս վկայություն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշված գինը:

Ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները որոշվել են Ընկերության կողմից՝ օգտագործելով առկա շուկայական տեղեկատվությունը, եթե այդպիսիք առկա են, և կիրառելով համապատասխան գնահատման մեթոդաբանություններ: Այնուամենայնիվ, գնահատված իրական արժեքը որոշելու համար շուկայական տվյալները մեկնաբանելու համար անհրաժեշտ է դատողության կիրառում: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է դրսևորել զարգացող շուկային բնորոշ որոշակի հատկություններ, և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների ակտիվության ծավալը:

22 Ֆինանսական գործիքների իրական արժեքը (շարունակություն)

Շուկայական գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել սթրեսային պայմաններում վաճառքի գործարքները և, հետևաբար, չներկայացնել ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս Ղեկավարությունն օգտագործել է շուկայական ողջ հասանելի տեղեկատվությունը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների իրական արժեքները էականորեն չեն տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքներից:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ. Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման վարկային ռիսկեր ունեցող և մնացորդային մարման ժամկետներով նոր գործիքների դեպքում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ. Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը չափվում է հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ զեղչված համանման վարկային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով:

23 Ֆինանսական գործիքների ներկայացումն ըստ չափման կատեգորիաների

Ընկերությունը, ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» համաձայն, դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ և (գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա. (i), պարտադիր կերպով իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ակտիվներ և (ii) ակտիվներ, որոնք սահմանվել են որպես այդպիսիք սկզբնական ճանաչման ժամանակ:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի 2023թ.
	Ամորտիզացված արժեքով
ԱԿՏԻՎՆԵՐ	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 10)	
- Ցպահանջ բանկային մնացորդներ	601,326
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 9)	
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	1,537,273
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	2,138,599

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով առ 31 դեկտեմբերի 2022թ.:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի 2022թ.
	Ամորտիզացված արժեքով
ԱԿՏԻՎՆԵՐ	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 10)	
- Ցպահանջ բանկային մնացորդներ	397,731
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 9)	
- Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	884,069
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,281,800

Ընկերության բոլոր ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով 2023թ. և 2022թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ:

24 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ

Փոխկապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. Գործունեության բնականոն ընթացքում Շնչերությունը իրականացնում է կապակցված կողմերի հետ գործարքներ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Գործարքների համար ակտիվ շուկայի բացակայության դեպքում օգտագործվում է մասնագիտական դատողություն՝ որոշելու, թե արդյոք գործարքները կատարվել են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նման տեսակի գործարքների գնորոշման և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ամիջական մայր ընկերություն	Համատեղ վերահսկվող ընկերություններ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	154,894	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	197,109	5,026

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար փոխկապակցված կողմերի գծով գործարքները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ամիջական մայր ընկերություն	Համատեղ վերահսկվող ընկերություններ
Ապրանքների ձեռքբերում	11,578,432	108,047
Ապրանքների վաճառք	694,919	232,795
Շահաբաժինների վճարում, հարկերից զուտ	1,705,116	-
Ստացված ծառայություններ	59,742	-

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ամիջական մայր ընկերություն	Համատեղ վերահսկվող ընկերություններ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	121,563	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	51,043	75,774

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար փոխկապակցված կողմերի գծով եկամուտների և ծախսերի հոդվածները հետևյալն են.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ամիջական մայր ընկերություն	Համատեղ վերահսկվող ընկերություններ
Ապրանքների ձեռքբերում	9,865,251	465,315
Ապրանքների վաճառք	1,027,830	621,986
Շահաբաժինների վճարում, հարկերից զուտ	1,484,558	-
Ստացված ծառայություններ	3,095	8,685

Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումները ներկայացված են ստորև. Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է գլխավոր տնօրենին, ֆինանսական տնօրենին, մասնաճյուղերի տնօրեններին և առաջնային ապրանքների վաճառքի գծով տնօրենին:

24 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	2023թ.		2022թ.	
	Ճախս	Հաշվեգրված պարտավորություն	Ճախս	Հաշվեգրված պարտավորություն
<i>Կարճաժամկետ հատուցումներ.</i>				
- Աշխատավարձ	99,045	2,248	68,264	386
- Կարճաժամկետ պարգևավճարներ	75,034	52,372	31,422	3,575
Ընդամենը	174,079	54,620	99,686	3,961

Կենսաթոշակային հատուցումների պլանները ներառված են վերը նշված ծախսերի կազմում 5,105 հազ. ՀՀ դրամի չափով (2022թ.՝ 3,153 հազ. ՀՀ դրամ): Կարճաժամկետ պարգևավճարներն ամբողջությամբ դառնում են վճարման ենթակա՝ ղեկավարության կողմից համապատասխան ծառայությունների մատուցմանը հաջորդող ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում:

25 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվից հետո տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք կարող էին հանգեցնել Ընկերության ֆինանսական հաշվետվություններում լրացուցիչ բացահայտման: